Կանոնադրությունը կազմված է
համաձայն համահայկական 7-րդ խաղերի
կանոնակարգի հիմնական դրույթների

«Հաստատում եմ»
Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիայի
նախագահ ______ Գ. Սարգսյան
«____» ______ 2019թ.

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ԽԱՂԵՐԻ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ

## 1. ՆՊԱՏԱԿԸ

-Նպաստել սփյուռքահայության հետ կապերի ամրապնդմանը

-Ի հայտ բերել ուժեղագույն մարզիկներին

## 2. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մրցումների կազմակերպման և անցկացման ընդհանուր ղեկավարությունը իրականացնում է Համահայկական խաղերի Համաշխարհային կոմիտեն, իսկ անմիջական անցկացումը իրականացնում է Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիայի կողմից հաստատված մրցավարական հանձնախումբը:

## 3. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Մրցումները տեղի է ունենալու 2019թ. օգոստոսի ________ Երևան քաղաքում________

## 4. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Սեղանի թենիս (կանայք և տղամարդիկ):

Անց են կացվում կանանց և տղամարդկանց թիմային մրցումներ, մենախաղեր և զուգախաղեր

Թիմային մրցումներին (յուրաքանչյուրում 3-ական մարզիկ և մարզուհի) թույլատրվում են մասնակցելու ոչ ավելի, քան 16 թիմեր:

հիմնական ցանցում ընդգրկվում են 64 մարզիկներ և մարզուհիներ (Հայաստանի քաղաքներից ոչ ավելի, քան 16 մարզիկ և մարզուհի):

Զուգախաղերի ցանկում կընդգրկվեն 16-ական լավագույն կանանց և տղամարդկանց զույգեր:

Թիմային մրցումների նախնական փուլում թիմերը բաժանվում են երկու կամ չորս ենթախմբերի, որտեղ շրջանային եղանակով խաղարկում են բոլոր տեղերը: Ենթախմբերում առաջին-երկրորդ տեղերը գրաված թիմերը մրցում են եզրափակիչ փուլում և խաղարկում 1-8 տեղերը: Այդ փուլի հաղթողները խաղարկում են 1-2 տեղերը գրաված թիմերը, իսկ պարտվողները՝ 3-4 տեղերը:

Յուրաքանչյուր թիմային հանդիպման ժամանակ հաղթող է ճանաչվում այն թիմը, որը առաջինն է վաստակում 3 միավոր: Թիմային մրցումներում հանդիպումներն անցկացվում են 5 խաղափուլով:

Անհատական մրցումները կանցկացվեն օլիմպիական մրցակարգով:

Հանդիպումները կանցկացվեն 7 խաղափուլով

## 6. ԹԻՄԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մրցումների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը համաձայն Համահայկական խաղերի կանոնակարգի:

## 7. ՀԱՅՏԵՐԸ

Մրցումներին մասնակցող կազմակերպությունների հայտերը պետք է ներկայացնեն կազմկոմիտեին ըստ խաղերի կանոնակարգի Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիա, մինչև ս.թ ____________ _____ ը:
Մրցավարների և ներկայացուցիչների համատեղ նիստը տեղի կունենա ______________

______________________________________________________________